



Կ ՏԱՐԻ, ԹԻՒ 11

1862

ՆՈՅԵՄԲՐԵՐ 1

### ՀԱՅԱԴՐԻ

22 ՏԸԿ — 30 Նոյեմբերի.

Հոգևորական Սահմանադրության պատճենաթուղթը

**Փ**շեց իջաւ պախորցին ձիւնապսակ սարերէն . արջառ ոչխար թողլով դապար արօտները՝ գռնափակ գոմերու մէջ նոկուած մայեն , հինգամնեայ ձմերան չանձրոյթը սկսելով : ( Օրոսասէրք և նասէրք այլ փութան 'ի շէն 'ի քալաք . վասն զի նոյեմբեր իր խոնաւ ոտքերովն կոխսեց զծառ ու զծաղիկ . տեւեներն իսպառ թօթափեցան , պտղառու պարտէզն չոր ձողերով ցցուած զատնէշ մը գարձաւ , կամ մրցէ փասած մերկ անառագաստ նաւախումք . զաղուկ պախորցի մ' այլ , պաղուկ հովլ' այլ , ու ահա մեռաւ անցաւ գալառութիւն մեր կլիմայից , ահա ձերմակ բատանքն այլ կու սկսին տեղ տեղ նոռուիլ . ձիւնն լեռներուն գագաթէն ար կ'իջնէ , կու սկսի յերևան գալ աշտաց . քիչ ատենէն զամենքը ծած-

կէ և միայն ինքն երենայ : . . . | մընցաւ այս տարուան բնական կամ բուսաբանական հանդէսն և կեանքն այլ . գոյենք գետնահայեաց պատուհաննիս , բանանք վերնադիտակ պատուհանները , զբունուլ զմայլիլ երկնից հովտաց լուսածղի ծաղկներովը , զոր տարւոյն բուսարձակ յեղանակաց կայտառութիւնն շատ հեղ արհամարհէլ կամ անտես ընել կու տար մեզի : | այէ . հայկակ , գլխէդ 'ի վեր . պարզ է գիշերս , տես աստղալից երկինքը . եկ դառնանք հնն , մեր ձմեռնային տեսարանն : Դյառ , ծաղիկ , պտուղ , խաղող , ամէնքն այլ կարծես մարդուս մանկութիւն , աշխայժ , թեթե մտածութիւն , զուարթերկրաւոր կեանք մը կ'ազդէն . իսկ երկնից աստեղազարդ երեսյթն՝ ախորժ ծերութիւն , ծանրութիւն մը , խոր մը .

տածութիւն և անմահութիւն մը : ||' Հ , որքան պիտի ընդարձակէր և բարձրանար մտքերնիս , եթէ կարենայինք՝ ինչպէս տնկաբանք բյուերը՝ այսպէս այլ այդ երկնահովտին ամէն մէկ լուսասերմ ծնունդները ճանշնալ , իւրաքանչիւրին կազմուածքը և իրարմէ տարբերութիւնը , իրենց Ճամբան և նպատակը , և “ զամենեսին զնոսա յանուանէ կոչել , : . . . իմերես օր մը գըտուին և յայսմ մասին մեզմէ աւելի բաղդաւորք , և երկինք պատմէ անոնց մեզմէ պահած Այստուծոյ գործքերը , և Հաստատութեներդաշնակաւոր ձայնն՝ լուսոյ հետ դարէ դար վար իջնելով՝ աւելի մօտ հասնի մեր որդւոց և թուանց : Իսկ մեք քանի որ մեր խոնարհ վիճակին և զիտութեան չափով՝ իրեւանապատակեաց թափառիկք կիսագլոր սայլերով գեգերինք , գուեհօրէն մեր չարժուն բնակութեան անուամբ երկնից ամենէն նշանաւոր համաստեղութիւնն այլ կ'անուանեմք Սայլ . զոր աստեղաբաշխք այլ՝ ոչ աւելի ազնիւ կոչմամբ անուանէն Արջ . և ինչպէս որ քեզ ծանօթ է ոչ մէկ , այլ երկու Այլ և երկու Արջ համաստեղութիւն նշմարեն , Մշէ և Փոտք : Ահաւադիկ առաջինն՝ բեեռէն բաժնուած երեսն այսդին դարձուցերէ . երկրորդին ծայրն նոյն իսկ բեեռէն մէջն է խրեր . այսինքն իր եօթն աստեղաց առաջինն՝ որ է քեղոյն ծայրն՝ ինքնին բեեռային աստղն է : ||' Եր նախնիք այլ ըստ հնագոյն և նոր ազգաց՝ զասոնք Այլ կամ Այլաթափէ կ'անուանեն . բայց ինչպէս որ նոյն հին ազգեր ուրիշ անուններ այլ կու տային այդ համաստեղութեան , նախնի Հայք այլ կոչէին Բաղմոյն , Աւաստան , Վշոյի (թերեւս վեցն որոշագոյն տեսնելով եօթներորդը նուազագոյն) , Բաղմատեղդ , Գուռապարք և այլն : Եւ ինչպէս ամէն ազգ մէկմէկ ազգային աւանդութեամբք կամ կարծեօք , այսպէս մերն այլ այդպիսեզք անուանէր է զայդ և ուրիշ աստեղաց բոյլքը , որպէս Հայն , Վահագն , Յարդգողն կամ Ճերծանն կամ Ճեծանոյն : Եթէ ազ-

գային հին գպրութիւնն և վիպասանութիւնք յայտնուեին՝ այս երկնից աստղային գպրութիւնն այլ հայ գրե . րով և անուններով պիտի կարգայինք . կամ թէ սուրբ ազգային ոգին կանգնէր տիրաբար և զիտնաբար և հրամմէր , անշուշտ գոքա հայկական դիւցային կամ սրբազնան անուամբք պիտի Ճանաշուեին . հին հայկական պայազատութիւնն իր քաջազունքը , զպրութիւնն իր իմաստասէրքը , և եկեղեցին իր սուրբերը պիտի յիշէր և անուանէր զանոնք տեսնելով : . . . ||' Ենք հիմա շատանանք այդ երկնագնաց գուպարեալ Այլին եօթնաստեղեան կազմուածքին նայելով՝ զուգել անոր այսօրուան Հայադիր յիշատակն , որ է Ուրբույ և Ծառառայ Լուսաւորչին . և առանց հեղինակութիւն բանեցնելու կամ օրէնք հրամմելու դիտենք այսօր եօթն աստեղաց մէջ կամ հետ՝ զդիլ . գոր՚ի ծայր քեղոյն , և վարը իւր որդիքն Առաստահին և Վրիսանին , և շրջանիւնները՝ Գրիգորիս , ազօտագոյնը , իրեւ հեռու աշխարհի (Աղուանից) հիւր զրկուած , և Յուսուկէ իր եղայրն , ներսէն՝ թոռն Քուսկան , և վերջին անիւ հիւսիսային բեեռին ուղղաձիգ նայող՝ Սահակ որդի Ներսիսի : Եւ թէ դու սրատես ըլլալով , Հայկակ , սիրես Փոքք Այլին վերածել այս ցանկալի անուններս՝ որ մեր ստոյդ երկնագնաց եկեղեցոյն հոգէկիր կառքն են , անոր ծայրի աստղն՝ որ է հիւսիսային բեեռն երկնից կ'ըլլայ մեծն Գրիգոր , մէկայլք այլ մի ըստ միոնէ :

||' Եր սրբազնան Հայադիրն՝ Գրիգորի . Ներսիսի , և Ահակայ մասնաւոր տօնական յիշատակաց օրեր նուիրելով այս օր մնացեալ չորից յիշատակը կարգէ . անոնցմէ այլ վերջնոյն , (Գրիգորիսի) սուրբ նշխարաց դիւտին պատշառաւ զատ օր մը նուիրէ . որով օրս սեփական մնայ երիցն , Առիստակիսի , Արթանիսի և Քուսկան , և ասոր մահուն ընկերակցի մը , Կանիելի ծերոյ :

1 . Տօնացոյցք ոմանք նոյնեմերի մէկին և ոմանք այլ դեկամերի մէկին զնեն այս տօնաւ :

ովք՝ի հարկէ այլ և այլ օր կատարեցին իրենց երկրաւոր կենաց յաղթական շրջանը, այլ որ և է մոռացութեամբ կամ խորհրդով՝ բոլորն միատեղ մէկ օրուան հասաւ մեզի։ Իսոնց համար երգէ քաջ գանձասացն ԱՌպիս։ “ԱՌտապայծառ լուսոյն աշտանակք գովելիք և բարձրաստեղունք, քահանայակետք գահաւորեալք շառաւեղեալք՝ի հօրէն լուսոյ, ճշմարտութեան ճշմարիտ քարոզք և պարծանք պարծանաց մերոյս գրոհի։ սիւնք տաճարի տեառն բարձրաբերձ գոլով և հաստահեղոյս։ սուրբ Իմիստակէս, վեհց Արթանէս, քաջափառ Հուսիկ և համբակ Պարիգորիս, հանդերձ սրբասնեալդ Իւնիելիւ այլասեռիւ և համափառիւ, անմարմնաբար ’ի մարմնի կառուցեալք՝ որպէս հրանիւթք և իմանալիք։ Ի՞սօր ժողովեալ մանկունք Ախոնի տօնեն ցնծութեամբ զօր յիշատակի ձերոյ հանդիսի։ Ի՞հաբուրեսցի այս երգ առաջի քո, ամենասուրբ Արքորդութիւն։”

Այս սքանչելի եօթնաստեղեան հայրապետաց գուպարքն՝ մեր եկեղեցւոյ ամենէն նշանական երեւութից մէկնէ, քաղաքական պատմութեան մէջ այլ ոչ աննշան, որովհետեւ ազգին հին հեթանոսաւկան օրինօք՝ քահանայապետքն թագաւորի պէս եզական գլուխ մ’էին։ թագաւորաց յաջորդութեան մէջ եղած պարապ ժամանակին այլ թագաւորահօր կամ խնամակալի տեղ մը կու բռնէին։ Իսոնց լուսափայլութիւնն մեր եկեղեցւոյն հորիզոնին և գահուն վրայ իբրև դար ու կէս քշածէ։ այն վսեմ, բեղմնաւոր և բազմայեղանակ դարուկէսն (Դն և Խն կէսն) որ քրիստոնէութեան փառաւորագոյն յեղանակն է, իր գերագոյն վարդապետաց և հզօրագոյն և ընտիր թագաւորաց փայլմամբ։ թագաւորաց նկատմամբ՝ այս յեղանակիս մեր պատմութիւնն շատ անփառունակ է, բայց մէկ Ծրդատ թագաւոր մը կ’ընծայէ՝ որ կըրնայ Հունաց Արտանդիանոսի և Խէռոդոսի հետ նախադասութեամբ մրցիլ (եթէ օրինաւոր է այսպիսի մրցումն)։

իսկ հայրապետաց նկատմամբ, մեր հայկական եօթներեակն չի նուաղիր Հոյն և Ատին ժամանակակից պանծալի հարց քով, թէ ոչ գրականութեամբ, այլ հովուական և ազգախնամ երկամբք, որ առաջին պարտք է հայրապետին։ ԱՌեր եկեղեցաշարժ Այլին առաջին և վերջին աստեղքն միայն, Պարիգոր և Ամահակ՝ ծանօթք են գրաւոր վաստակովք այլ։ միւսոց սակաւ ինչ յիշատակ կայ, այլ քրտամբք և արեամբ մի քան զմի գերագոյնք, և առաքինական գործովք զանազանեալք։

Այրեք հայրապետաց (որոց մասնաւոր յիշատակն տրուած է այսօր), զառաջինն միայն հետազօտենք այս գիշեր, որ և ’ի կարգի հոգէփայլ Այլին անմիջապէս յետ Ուսաւորչին գայ, այսինքն է ԱՌԵՍՏԱԿԻՍ կամ ՌՍՏԱԿԻՍ, երկրորդ որդի Պարիգորի՝ տարւօք, բայց աստիճանաւ յառաջացեալ քան զանդրանիկն Արթանէս։ որովհետեւ սամոււանացեալ էր, ինքն կուսակրօն, և վասն այնորիկ ընտրեցաւ ’ի հօրէն յաջորդիւր։ Արթանց մէջ սաև Պարիգորիս միայն կուսակենցաղ եղան, հրեշտակային միայնութիւն սիրելով, քան Ուսաւորչայ ցեղը աձեցնել, որոյ համար մէկայլոնք յանձն առին ’ի սկզբան աղամային լծակցութիւնը։ ԱՌնչեռ Արթանէս հօրը նման պատանութեան ատեն աշխարհ մտաւ ’ի ԱԵՍԱՐԻԱ, Իմիստակէս գրեթէ ծննդեան ատենէն յաշխարհէ զատուելով անապատասէր տատրակի նման միշտ միայնութիւն և առանձնութիւն սիրեց։ երկու որդւոց ըատ աշխարհի հայր ըւլան բաւական սեպելով մեծն Պարիգոր, ընդհանուր հայ ազգին հայրութեան նուիրեց զինքը, երկայն և վերջին բարեւ մը տալով իր պարկեշտ լծակցին՝ ԱՄԲԻԱՄԱՅ, որ իր սիրոյ վերջին խայրիքը գեռ ծոցին վրայ կրելով երկանը հետ բոլոր աշխարհիս այլ մնաք բարով ըստաւ, քաշուեցաւ հաւատաւոր կանանց վանք մը, և հոն մնուց իր երեխայն, ինչուան որ հասաւ տարիին՝ մարց և կուսանաց գրկէն ելնելու և Ճգնազգեաց

Հարանց որդեգրելու : Հօրմէն զատուած ատեն, անզգայ անծանօթ անձիկ մ'էր Առհստակէս . իսկ մօրմէն բաժնուելու ատեն՝ այնքան լաւ և խոր զիտէր մայլական սէրը , որքան որ ուրիշ սէր մը չէր զիտէր . բայց դարձեալ՝ ինոյն առաքինի և մեծասիրտ մօրմէն սովլրելով հանդերձեալ կենաց գերագոյն սէրը և վարձքը , և անոր օրինակաւ և խրատովն յորդորուած՝ պղտիկ հասակաւն և ուժովն , ըրաւ այն մեծ անցքը , իրեւ նոր Այամուէլ մը Իննայի ձեռօք . և յանձնեցաւ ՚ Խկոմաքոս անուամբ զգօն Հոյն կրօնաւորի մը , որ շատ տարի քովլ սկահէլով՝ եղաւ անոր հոգւոյ հայր . և երբ քրիստոսանուէր կենաց ամենայն հնալքը սովլրեցուց և բաւական տեսաւ իր հոգէսուն աշակերտը՝ ցրցուց անոր խորագոյն միայնութեան և անապատին դուռը : Առհստակէս երրորդ անգամ մ' այլ բաժնուելով՝ ինձկ հատիկ ծանօթ և հոգեկից անձէն , և թերես առաջնէն զօրաւոր (թէ ոչ նոյն պէս կակուղ) ցաւով , թողուց զինքն իրեն , և թաղեցաւ առանձնութեան մէջ , միայնակեաց աստուածախոհ ճգնաւոր մը ըլլալով . այսինքն մինակ ապրօղ աղօթիւք և ընթերցմամբ և քիչ մը ձեռաւոր աշխատանօք բոլոր կեանքը մշտավառ կանթեղի մը պէս Առտուծոյ դիմաց կախելով , գիշեր ու ցորեկ :

(Ը) երես աւելիքանքան երկայն տարիներ անցան այն լուռթեան և միայնութեան մէջ մէկ օրուան մէկ գիշերուան պէս , երբ առաւօտ մը իր մոռացեալ խրձթին դուռը ուժով զարնուեցաւ . և երեցան բազմութիւն անձանօթ և օտարադէմ մարդկան , ոսկէփայլ արծաթազրահ զինուորք , ցցունազարդ սաղաւարտաւորք , գետնագղորդ հեծեալք , որք չէ միայն քսան , այլ քառասուն յիսուն տարուան բաներու երազներ պատմեցին . գոնէ իրեն երազ երեցան այն տարիներուն մէջ հանդիսաները դուրսը , իր հօրը , Հայոց ազգին և անոնց թագաւորին . որք հիմա իրեն հրաւիրակ խաւրելով

ազգին ազնուագոյն իշխանները՝ կու հրաւիրէին , կու ստիպէին կու քաշէին որ ենէ գայ ՚ի Հայաստան , ՚ի Աղարշապատ , յարքունիս հսկայ թագաւորին և ՚ի գահ քահանայապետութեան Հայոց : — Որչափ այլ նորատեսիլ էր այս երազս և դժուարին անկէ արթննալ , աւելի դժուարին եղաւ Առհստակէսի , մանաւանդ թէ անկարելի՝ իր միայնութեան տեսիլները շարունակել . աշխարհախառն խժլուք մը ալիքներու պէս խուժելով՝ զարկաւքեց իր պարկեշտ շեմկիկը , և հեղեղեց իր ամօթիած խցիկը . շփոթեցաւ անզբազութիւնն , փախաւ խացեալ բաղմամեայ լուռթիւնն . Առհստակէս իրեւ չորս դին ջուր առած՝ հազիւ քարի մը վրայ ոտնկուիւ եղած շուար մընաց : . . . Աւելի քան զլսած բաներն և աւելի քան անտես հօր մը , թէ և այն պիսի արժանաւոր աննման հօր մը՝ անփորձ սէրն , քաղցր և ցանկալի էր իրեն իր միայնութիւնն , իր բոլոր ստացուածքն , իր տէրութիւնն , իր սէրն . և եթէ Այսուծոյ և հօր մը կամաց հնազանդութեան պարտքը չի ճանչնար , ու Այսարիոյ եկեղեցւոյ գլխաւորներէն չի յորդորուէր , չէր կրնար թողուլ իր խշտեակը և երթալ Հայոց նորահաստատքահանայութեան գահազլուխըլլալ : Այբազան հարկին գլուխ ծաեց Առհստակէս , ոչ առանց կծու արտասուքներով բաժնուելու այն տեղէն՝ որ միայն զինքը կու ճանչնար , և զոր միայն կու ճանչնար ինքն . և այն քանի մը սըրտակից հոգեկից անձինքներէ՝ զոր իր սրբութիւնն ժողովեր և աշակերտեր էր իր ճգնարանին մօտ : . . .

Ը ուտով աներեւոյթ եղաւ իրեն ծանօթ սիրելի սահմանն . շատ չափաւոր համառօտ էր իր հորիզոնիկը . կարծամմը ըանցած՝ նոր հորիզոն և նոր աշխարհ մը բացուեցաւ դիմացը , ո՞ւ անծայր անվերջանալի կու թուէր՝ ո՞ւ չափ որ յառաջ երթար : Բայց իրեն առաջն տեսիլք և ցուցանք եղան զինքը տանող բազմութիւնն , Հայոց արքը որնիգին հսկայակերպ կտրիձներէն

անձունի ՃօՃմունքներով, ահագին զը-  
րայներով, երկայն տէգերով և լայ-  
նալիճաղեղներովն, որոց մէջ՝ որսորդնե-  
րէ բռնուած վայրի հաւկի մը պէս վախ-  
նալով կ'երթար. առանց խօսելու կու  
նայէր կու նկատէր անոնց շատ արևե-  
շատ արիւնէ անցած խանգրած երես-  
ները, հին ու նոր սպեաց նշաններ, ա-  
ռիւծածե ցցուած և տարրածուած մա-  
զեր. — կու տեսնէր անոնց մէջ ամե-  
նէն պատուելի և նախիշխան եղած ծե-  
րունի մը, որուն գմբեթածե գլուխն  
թէ և բողոքովին ալեռած էր, թէ և  
երկայն ասրածե յօնքերն խառնուէին  
խորացած աչաց թարթիչներուն հետ,  
թէ և կտրիճ թոռներու պապ կ'երե-  
ցնէր զնա հասակն, բայց դեռ զէնքով  
ու զրահով ծածկած, իր ամենէն կայ-  
տառ զինակրին հաւասար շուտ կու  
շարժէր, կ'ենէր կ'իջնէր ձիէն, ու ձայ-  
նը փողի պէս գնդին մէջ կու տարա-  
ծէր. և էր Արտաւալդ մանդակունի  
սպարապետն Հայոց, և դաստիարակ  
թագաւորին Տրդատայ. զոր յառաջ-  
քան զյիսուն տարի փախուցեր ազա-  
տեր էր Ի՞րիստակիսի պապուն ընկե-  
րաց ձեռքէն. և այսօր անոր թուր՝  
զինքն Ի՞րիստակէս՝ կու տանէր իր վե-  
հափայլ աանուն մուերիմ ընելու : Եցր-  
կրորդ պատուելի անձն կ'երեէր գնդին  
մէջ բաւական տարւօք կտրիճ մը, Տա-  
ճառ՝ Ի՞շոց գաւառին տէրն, որ և փե-  
սայ էր Ի՞րտաւազգայ և երբեմն ձանչ-  
ցող և մատնող Պրիգորի՝ իբրև որդւոյ  
Ի՞նակայ սպանչի հօր թագաւորին, և  
յետոյ նոյնպէս իմաց տուող Տրդատայ  
որ Պրիգոր երկու որդիք ունի, արժա-  
նաւորք պատուելոյ. անոր համար այլ  
դրկուեցաւ զանոնք գտնելու տանելու,  
և այսպէս փոխարինելու իր մատնու-  
թեանը, որավ Ուսաւորին տասն և  
երեք տարի յօձուած վիրապին Ի՞րտաշա-  
տայ մթնեցաւ. Ի՞ոլոր գնդին յառա-  
ջաղէմ և վարիչ կ'ընթանայր եռան-  
դուն երիտասարդ մը, իբրէն յարմար  
կրակուտ երիվարի մը վրայ թռչելով,  
Դադ կարապետն Տրդատայ. որ ամե-  
նէին Ի՞րիստակիսի կամկարութեանը և

սրտով և աչօք յետ դառնալուն չինայ-  
ելով՝ փողէր փշէր երթայր, և ար-  
քունի գունդը յանապատէն փոխադ-  
րէր՝ ի կեսարիա մայրաքաղաք Փ.  
Հայոց, ուր առաջուց գտեր և պատ-  
րաստէր էին զլի բթանէս երէց եղ-  
բայր Ի՞րիստակիսի. որք և զարմանօք  
և երկինք նայելով եղածները մէկմէ-  
կու զրուցելով և իրարու գիրկ տալով,  
անկէ ետև կամայ ակամայ ճամբայ ըն-  
կան փութալ դէպ 'ի ՈՒեծ Հայք : ...  
Համնինք մենք այլ հօն մեր պատ-  
մութեան ճամբան կարձեցնելով : Ի՞հա  
համբաւը լսելով՝ թագաւորն ինքնին  
ընդ առաջ կու գայ իբրև իրեն եղբօրորդ-  
ւոց և որդւոց Ուսաւորչի, կ'ուզէ ան-  
ձամբ տանիլ զանոնք իրենց հօրը : Իսկ  
հայրն նոցա և մեր՝ որ կամակից էր  
թագաւորին իր որդիքը կանչելու ՚ի  
Հայս, ոչ աշխարհական փառաց և  
մարմնաւոր միհիթարութեան համար  
էր, այլ իր հոգեւոր բեռը վերցնելու  
օգնական և փոխանորդ ունենալու հա-  
մար, զոր չէր կրնար այնպէս համար-  
ձակութեամբ յանձնելու ուրիշ՝ ինչ-  
պէս իր որդւոց. միանգամայն և երկայն  
չարակրութեամբ և յոգնութեամբ մա-  
շած՝ կարծէր թէ շուտով իրեն կենաց  
վախճանն պիտի հանի, և փափագէր  
վերջի տարիները միայն իր հոգին մտա-  
ծելով պատրաստուիլ ՚ի հանդերձեալ  
կեանս. դարձեալ՝ անդադար գովու-  
թիւն և օրհնութիւն և պատիւ լսելն՝  
ուր որ երթայր, իբրև գերմարդկային  
անձ մը երեւելով, իրեն ծանր կուգայր  
և կ'ուզէր փախչիլ ՚ի մարդկանէ և  
թաքչիլ յԻ՞ստուած : Ի՞յս մտածու-  
թեամբ էր որ հիմա այլ որդւոց գա-  
լուն ատեն՝ ինքն չէր երեէր, այլ յԻ-  
կեղեաց գաւառն էր, ուր այնչափ չար-  
չարանք կրեր էր, և իբրև թափած ա-  
րեանը գին՝ Տրդատ անոր տուեր էր  
այն գաւառին մեծ մասը, լեռներով  
դաշտերով և շէնքերով, մինչեւ Լրաս-  
որչայ գաւառ ըսուեցաւ երկիրն : Ի՞յս  
գաւառին և Պարանաղեաց սահմա-  
նամէջ և Սէպուհ սրակատար լեռն,  
լայնատարած կողերով, այրերով, քիչ

տեղ գուր շատ տեղ դժար, անտառոտ  
մայառոտ տափերով. այս դժուարակոխ  
և աչարկու տեղուանքը՝ ուր հազիւ  
հոլիւներն կրնային ենել իրենց հօտից  
ետեւէն, մէկ զարմանալի աղջիկ մը  
կրցեր էր արիաբար ենել, և երկայն  
տարիներ պատիկ քարայրի մը մէջ մի-  
նակ ապրիլ վայրենի որոջի մը պէս.  
իրմէ զարմանալի և գեղեցիկ աղջկան  
մը (Հոկտիմեայ) ընկեր էր սա, մենա-  
սէրն Մանի. զոր յետ շատ տարիներու  
գտաւ այն խորշերուն մէջ | ուսաւորիչ  
աշքն. և երբ ժամանակն լցուաւ, ամ-  
փոփեց անոր պարկեշտ մարմինը իր  
հոլուական վերարկուաւն, և թաղելով  
անորներքսագոյն մենարանին մէջ, ան-  
կէ ետեւ ուզեց ինքն ժառանգել զայն  
տեղը, և իրեն մենարան և աղօթա-  
րան ընտրել: Ի՞շա այս կողմերս էր երբ  
լսեց Տրդատայ ձայնը, որոյ ձայնին  
միայն պատասխան կու տար և կ'եներ  
իր ձգնարանէն, և առիւծն և գառն  
համամիտ և համասէր մէկտեղ կենա-  
կցէին: Ի՞շ անգամ թագաւորին հետ  
տեսաւ իր առաջին կենաց ժառանգքը  
և կենդանի յիշատակքը, իր արիւնը,  
իր որդիքը. որոնց երիցուն վրայ թե-  
րես քիչ մը ձանցնար հին նմանու-  
թիւն, իսկ կրաերոյն՝ Ի՞նիստակիսի  
վրայ՝ զուցէ ուրիշ նմանութիւն չեր  
գտներ, բայց եթէ թեթե ամայոյ մը  
պէս հեռացեալ սահեցեալ անձի մը՝  
որ երբեմն իրեն կենաց կցորդ, և անոնց  
մայր եղած էր. եթէ դեռ այսպիսի մը-  
տածութիւն կրնար այն աստուածա-  
խուհ անձին միտքն այլ զարնել հե-  
ռուանց: Ասկայն եթէ արտաքին նմա-  
նութիւն և ծանօթութիւն դժուար  
և աննշմար էին Դրիգորի և Ի՞նիստա-  
կիսի մէջ, հոգեխառն նմանութիւնք  
զարմանալի կերպով կ'երեւէին. — եր-  
կուքն այլ անմարմնոց նման, մէկն ձգ-  
նաւորի հայր, միւսն ձգնաւորի որդի,  
երկուքն այլ ձգնողք: Վառասուն տա-  
րեկանի մօտ էր Ի՞նիստակիս՝ երբ ա-  
ռաջին անգամ ձանցաւ իր հայրը զլլ.՝  
Դր. | ուսաւորիչ Հայոց. ինչ զգաց-  
մունք մաքուր սրտին՝ առաջին անգամ

համանման մաքուր և վեհ սրտի մը և  
գրկաց վրայ բարեխած ատեն... Տե-  
սեր ես, Հայկակ, ճամբան փոխել  
տուած գետ մը. իր յատակին պէս ձե-  
ռագործ յատակ մը կու փորեն երկայն  
տարիներ աշխատելով, որուն ծայրն հո-  
գաթմբով կամ կապանքով մը միայն  
զատուած է՝ ՚ի գետոյն. երբոր վերջա-  
պէս կու փորուի կու լմբնայ նոր ճամ-  
բան, այն կապանքը կու քակեն. կամ  
այն հողաթումբը կու թմբեն կու փո-  
ղընեն, և աչա յանկարծ գետն իր հին  
ծոցը թողլով այս նոր բացուածին մէջ՝  
ապակիիէ լեռներու պէս թաւալելով  
կու թափուի, և երկայն տարիներով  
փորած ցամաք ծոցը՝ վայրկեններու մի-  
ջոց կու լեցուի կու ծածկուի անծանօթ  
հոսանքներով: | յապէս հորդեց ՚իսըր-  
տէ Դրիգորի հոգէխառն սէրն ՚ի սիրո  
և ՚ի հոգի Ի՞նիստակիսի, ոչ այնքան  
բնական, որքան գերաբնիկ ներգործու-  
թեամբ մը: | նշուշտ հոգին սրտին զար-  
կեր և բան մը ազգեր էր Դրիգորի,  
զոր թերես լաւ չեր իմացած այն ատեն,  
երբ մօրը զիրկը ձգելով զլլ պիստակիս  
երախայ՝ հեռացաւ անոնցմէ և այսօր  
երկրորդ զարնուածք սրտին իմացոց  
յայտնապէս, եթէ սա է իր հոգւոյ  
պայազատն, իր յաջորդ հայրապէտն  
Հայոց: Ի՞րդէն իրեն տեղակալ և ընդ-  
հանուր հոգաբարձու եկեղեցեաց և  
վանորէից զրեր էր Դանիէլ անուամբ  
եպիսկոպոս մը, (որ և երկարակեաց ըլ-  
լալով նոյն պաշտօնը վարեց Ի՞նիստա-  
կիսի, | թթանիսի և Յուսկան որերն  
այլ, և եաքինիս մահուընէն ետև՝ ա-  
նոր պէս ինքն այլ նահատակեցաւ,  
վասն այնորիկ և այսօր | ուսաւորիչ  
որդւոց և թուանց հետ հաւասրա-  
պատիւ տօնի). անկէ զատ ձեռնադրած  
հարիւրաւոր եպիսկոպոսաց գլուխ և նա-  
խադաս կարգեր էր զլլ լրիանու Հայ-  
քայ եպիսկոպոսն, որ քրիստոնէի մը  
որդի էր. իսկ հիմա զլլ պիստակիս ՚ի  
խնդրոյ թագաւորին Տրդատայ և մե-  
ծամեծաց և եպիսկոպոսաց՝ անուանեց  
իրեն երեսփոխան և յաջորդ, եպիսկո-  
պոսական աստիճան տալով անոր, ինքն

այլ անոր վիճակը իրեն առաւ, այսինքն առանձնութիւնն, առաջինէն աւելի հեռանալով աշխարհէ և լեռնակեցիկ ճգնելով, միայն ատեն ատեն իշնելով և որդւոյն հետ միաբան ձգելով հոգեւոր արօրը Հայաստանի ընդարձակ եկեղեցական ագարակին մէջ:

Եթե քանի մը տարի այսպէս քաղաքավարելու՝ Տրդատ ուղեց տեսութեան երթաւ կոստանդիանոս կայսեր իր մեծամեծ նախարարներովն, երբ նա 'ի Վրիստոս հաւատալով ազատութի հրատարակեց եկեղեցւոյ, Պրիգոր այլ իջաւ իր ճգնարանէն՝ մէկտեղ երթալու ընորհաւորելու եկեղեցւոյ գլխոյն՝ եղած յաջողութիւնը, և հետն առաւ իր եկեղեցւոյ գլխաւորները զի՞րիստակէս և զի՞լքիանոս հանդերձ այլովք: Եւ երբ յետ իբր տամն տարւոյ Կոստանդիանոս հրաւէր խաւրեց առ Տըրդատ նորիէն զի՞րիգոր առնուլ և գալ 'ի Արկիա քաղաք, ուր եկեղեցւոյ գըլխաւոր եպիսկոպոսներէն 300էն աւելի պիտի ժողովէին 'ի քննութիւն և 'ի դատապարտութիւն Վրիստի վարդապետութեան, Տրդատ աշխարհին քաղաքական վիճակին համար, Պրիգոր այլ խոնարհութեամբ պատուե փախչելով, յանձն չառին երթաւ. այլ իրենց կողմանէ խաւրեցին զի՞րիստակէս, ընկերութեալու ուրիշ քանի մի եպիսկոպոսաց Վեծ և Փոքր Հայոց, որոց անուանքն նշանակին 'ի կանոնական գիրս ժողովոց եկեղեցւոյ: Վրիստակէս երթալու ատեն հանդիպեցաւ 'ի Աւսարիա՝ ընկերակցելու Ո. Ի ևոնդայ Հայրապետին՝ որ իր Հայրը ձեռնադրեր էր, և նոյն օրը եկեղեցւոյ մէջ կու մկրտէր իր հօրն անուանակիցը զՈ. Պրիգոր՝ Հայր Պրիգոր Վատուածաբանի, իրեն նման մենասէր Հայրապետի, որ և նոյնպէս իր հօրը օգնական և յաջորդ եղաւ՝ Ազգիանզու եկեղեցւոյն մէջ. այս հանդիսին ներկայ և Ճամբուն ուղեկից եղան Ո. Հակոբ Ո. Ծքնայ Հայրապետն, Եւթաղ Աղեսիոյ Հայրապետն և Յովհան Պարսից Հայրապետ, և այլք:

Կնքնելով ընդ Լապաղովիկիա, Պա-

ղատիա, և Վիւթանիա՝ հասաւ այս մեծ և փառաւոր եպիսկոպոսաց կարաւանս յառաջին ժողովարանն եպիսկոպոսաց 'ի հաստատութիւն հաւատոց, 'ի Արկիա քաղաք. որ և առաջուց հոն ժողոված պատուական առաջնորդներովն և ժողովրդոք ընդառաջ ելան արելցից վեհակոյն հայրապետաց, որոց նմանք չերևեցան երբէք ժողովոց մէջ: Վ. յս հայրապետաց մէջ, առանց կողմանափութեան և վիճաման, Հայոց հայրապետն էր ամենէն հետաքննելին և փափաքելին. քսան և հինգ տարիէ վեր յարեւլք և յարեմուտք հոչակուած էր Պրիգորի Ո ուսաւորչայ անունն, խոստովանողական նահատակութիւնն, բազմամեայ վիրապ-ընկեցութին, Հայոց հսկայ թագաւորը և բոլոր ժողովուրդը 'ի Վրիստոս հաւատայնելն, և հարիւրաւոր եպիսկոպոսաց գահագըլուխ ըլլախն. և գեռ շատերն ըգիտնալով անոր խոնարհաբար հրաժարելին՝ կարծէին թէ պիտի տեսնեն զնա Աւարիոյ հայրապետին աջակից. այլ խաբուեցան. ազնուախոնք՝ միխթարուեցան անոր տեղ հայրանման արժանաւոր որդին տեսնելով, իսկ այլախոնք (եթէ ստոյդ է աւանդութիւնն) տչամելով և արհամարհելով. վասն զի կ'ըսէ աւանդութիւնն, թէ Ո. Պրիգոր մեծահասակ և վայելքակերպ էր, իսկ Վրիստակէս՝ փոքրահասակ և վատուժ, տղայութենէ վեր անդադար ճգնութեամբն, Ո Վենաւորութեան լեառնակեցութեան, քաղցի, ծարա, ոյ և բանջարածաշակ կենաց, և արգելանաց անլուսից, իւարազնազգեստ և գետնատարած անկողնոց և բազում անդամ զիեշտական հանգիստն գիշերաց զհարկ քնոյ՝ յոտանսաւոր տքնութեան 'ի թարթափ ական վը Շարելով, և իր անմոռաց մենասէր ճգնազգեցութեան ախորժովն՝ անզարդ անպաշոյձ հագած, որչափ որ կրնար եպիսկոպոսաց գլխաւոր մը: Ո որ տեսնալով, կ'ըսէն, պճնասէր և ամբարհաւած Հոռոմոց լաձերն, որք Արկիոյ

1. Ազաթանգեղոս:

լշին ( Աքկամիոս , Խզնիկ կեօլիւ ) եզերքն կու սպասեին , քթերնուն տարին , և դա ոչ եպիսկոպոսապետի՝ այլ եզնավար մշակի մը կերպարանք ունի , կ'ըսէին . և չարաձշիկք ոմանք՝ հոնգետին հերկող եզներն այլ կու ցուցընէին , կամ զինքը փորձել ուզեին հրեաբար նշանախնդրութեամք . Այս ատեն Առիստակէս , կ'ըսէն մեր այլ յաղթասէր և հոռոմամարտ աւանդաբանք , մաճք բռնելով քշեց եզանց զցգը , ոչ կարծր հողը կակղելու , այլ կակուղ ջուրը կարծրացընելու . և Կիկիոյ լշին մէջ արտավար մը տեղ՝ իբրև ցամաքի վրայ գնալով և քայլեցնելով եզները՝ ալիքները ակօսեց , Ճերմակ փրրփուրով գիծերը ղիզելով , և դարձաւ ցամաքք . և իր ոտից հետքն ինչուան հիմա կ'երեայ լուսափայլութեան նշանով : Դու , Հայկակ , մի փնտուեր այդ նշանները , ինչուան որ հրաշիցն արժանաւոր և ստոյգ պատճառը չի գրտնես . սակայն իբրև հին աւանդութիւն կարդա գովասանին գրածը . “ Եվերայ կապուտակ ալեացն լայնատարած լը . ան լիութեան վեհաւետ և քստմնածածան կորովակի սիքաշարժ թանձնութեամք ջուրցն ովկիանոյն՝ սիգաքայլ ոտիւք սրբնթացութեամք սիրացեալ . անվեհեր գիտմամք յիսուսաբար ’ի նկատեալ տեղին հասանէր . ոչ պետրոսօրէն երկմտէր , այլ փրկչաբար խիզախէր : Եւ ժողովելոց հարցն բազմութեան՝ սիրալի հիացումն առնէր . և զանդրադարձութիւնն եկալութեամք՝ ոչ տարակուսանզք ինչ հայթհայթէր , կամ յառաջարկեալ հանգիսէն կասէր . այլ նոյնաձև օրինակաւ համարձակապէս՝ ի հաստատաւութեամք . ոչ տարակուսանզք ինչ տագնացութեանն մինչեւ ցայսօր ժամանակի լուսաշաւիղ երևմամք ’ի վերայ երեսաց ջուրցն տեսանի առ ’ի յիշատակ սրբոյն սքանչելեաց . և անմարտսապէս ամենայն ուրեք՝ ի տեսագայն ստուգիւ պատմի առանց երկրայութեան , որպէս և է անմարիտ . նաև թշնամեաց վկայութիւն հրաշիցն կ'աւատ տեսողաց :

, հաւատատի հաւաստեաւ , որ զօրաւոր է յամենայնի . այլ և տռն Ապտու , ծոյ և տաճար ’ի տեղւոյն հաստատեալ , առ ’ի վկայութիւն հրաշիցն և ’ի հաւատ տեսողաց :

Եկեղեցւոյ և տիեզերական սուրբ ժողովոյն պատմութիւնն ամէնուն ծանօթ է . յետ վճարման գործոցն՝ Առիստակէս այլ գարձաւ իր աշխարհը . և ժողովոյն մէջ եկեղեցական բարեկարգութեան համար սահմանեալ կանոնաց օրինակը և հաւատոց գաւանութիւնը կամ հանգանակը բերաւ ներկայացուց իր հօրը և Տրդատայ , որք պատկառանօք ընդունելով՝ նոյնպէս այլ ընդունելի ըրին բոլոր Հայոց . Արքագոր իր կողմանէ այլ քանի մը կանոն և վարդապետութիւն աւելցուց անոնց հետ . և անոնցմէ զատ այլ շատ կանոններ և վարդապետական ճառեր և ազօթներ գրելով և աւանդելով իր սրենակիր և հոգէկիր յաջորդին , քանի մը տարիէն ետև բոլորովին հրաժարեցաւ յաշխարհէ և ’ի տեսութենէ մարդկան . և այլ չեր իշնէր իր սեպհական լեռնէն յայց ենելու իր հոգէծին որդւոցը . հազիւ երբեմն կ'ընդունէր ’ի տեսութիւն զհրդատ և Արքատակէս՝ երբ եկեղեցւոյ հարկաւոր խնդիրներ կամ տարակոյս ունենային : Այսպէս Արքատակէս յետ տասնուհինգ կամ աւելի տարի առանձին եպիսկոպոսութեան և երեսփոխանութեան , յառին 331 միանակ և բուն քահանայապետ ճանշուեցաւ Հայոց . և եօթն տարի կեցաւ սըր բազմն պաշտաման մէջ . ոչ պակաս այլ և “ առաւել ևս քան զհայրն վեր , ըրագոյն երեւեցուցանէր սա զիւր վար , գապետութիւնն առ հարբն , և յետ , նորա , որպէս վկայէ ականատեսն և ականջալուրն Ացաթամնգեղոս . և միւս պատմիչն՝ ասէ . “ Արդարեւ էր սուսէր , հոգեւոր ըստ ասացելումն , վասն որոյ , թշնամի ամենայն անիրաւաց և զալ , ըրագործաց երեւէր , Երբ եօթնամեայ միայնակ քահանայապետութեան միւս :

Չոց Առիստակէս ջանաց իր լուսաւորիչ հօրը լցոսը աւելի ծաւալել, կարգերը հաստատել, պակասները աւելցընել, մասնաւորապէս վանքերը շատցուց, եկեղեցեաց մէջ այլ յիշուի Հյոփաց գաւառին մէջ շինած մէծ և հոյակապ եկեղեցին։ Իսկ դրաւոր յիշատակ հասած չէ մեզի իրմէ։ միայն կու յիշուի որ հօրն հետ կանոններ դրբաւ և վարդապէտութիւն եկեղեցւոյ։ Իներբող իմանալի և զգալի եկեղեցւոյ վայելչաբան շարական մ' ունիմք, ։ Օ որս լստ պատկերի քում, և այն, ։ ասոր հեղինակ կարծուող զանազան անձանց մէջ երիցագոյնն է Առիստակէս, թէ և ոչ հաւանագոյն։ և ասի թէ յետ դարձին 'ի ժողովոյն՝ Արկից երդած ըլլայ, ։ Աեցո զորդի ծառայի քո զոր 'ի Հռովմայ գահիցն վերապատուեցեր, ուր եղին զվեմն հաւատոյ ։ Հիման սուրբ եկեղեցւոյ, ։ Իսկ իր Վերագոյն և սուսէր հոգեոր աներկիւղ վարդապէտութեան պայծառագոյն վեկայութիւնն այլ է իր վարդապէտութեան և կենաց կատարածն։ Հայոց հաւատալէն վեր մօտ քառասուն տարի անցեր էր, որչափ որ քրիստոնէութիւն համարձակ ծաւալեալ պաշտուէր, բարուց թուլութիւնն այլ կու սկսէր երես ելնել։ մանաւանդ որ մեծն Տրդատ այլ ծերացեր, և ինքն այլ իր հոգեւոր հօր Պարիզորի նման ճգնասիրութեան և առանձնութեան փափագէր։ ասով թուլամիտք և թուլահաւատք սկսան համարձակութիւն առնուլ, մանաւանդ ուր որ թագաւորէն շատ հեռու էին։ Այսոնցմէ էր և Արքեղայու Հյոփաց նահանգին նախարարն, սահմանակից Փոքր Հայոց և Հյունաց բաժնին, և ըստ ոմանց՝ ազգաւ այլ յունախառն, ասոր երկրին մէջ էր Առիստակիսի շինած մէծ եկեղեցին, ուր թերեւս սովորական աթոռն այլ դրած էր։ և շատ անգամ գալով և տեսնելով նախարարին անքրիստոնեայ վարքը՝ հայրապետաբար կու խրատէր և յանդիմանէր։ բայց ամսղարիշտն ոչ միայն ոչ զգաստացաւ, այլ ոխալով և մախալով՝ Հերով

դիսի և Հերովզիադայ խորհուրդը մոտաթերեց, մեր Ճշմարտաքարոզ կարապետին գլուխն առնուլ, մենասէր տատրակին մրմունջը լսեցնել։ և երբ օր մը սուրբ Հայրապետն քանի մը աշակերտօք առանձնաբար կու գար՝ շատ չբանած Ճամբէ մը, յանկարծ ծածկուած դարանէն աւազակի պէս դուրս ցատքեց Արքեղայոս իր սպասաւորներովն, և սրով թռուց սրբոյն աստուածախոնց և քաղցրաձայն գլուխը ։ Ինապատէ յանապատ փչեց շունը ։ 'ի միայնութենէ մարմնոյն յաստուածային միայնութիւն միացաւ մաքուր հօգին։ որ աւելի քան զ60 տարի իբրեւ բռնի արգելեալ էր 'ի պարկեշտ հողեղին բնակարանին։ Առաջինն 'ի յաջորդաց Առւատորչի այսպիսի վկայական մահուամբ կնքեց իր մէծ և ծանր պաշտօնը, աւելի յայտնի արեան նահատակութեամբ քան իր ամէն յաջորդքը։ (բաց 'ի Հովսեփիայ նահատակցէ սրբոց Առնդեանց)։ Իսկ իր հոգեփայլ բազմակցաց մէջ, իրեն նմանագոյնն կուսութեամբ ։ Պարիզորիս, մահուամբն այլ կերպով մը նմանակից է, չարաչար սպանմամբ արեան հեղութեամբ։ անոր եղբայրն Հուսիկ՝ ծեծով անարիւն զոհ եղաւ։ Աերսէս նոյնպէս վկայ և զոհ, այլ աւելի ծածուկ, թռունով մահացեալ։ Առմանէս և Այսակ միայն բնական մահուամբ և ծերութեամբ մէռան յանկողնի, 'ի միջի սիրելեաց, իսկ պարապլուխ գուպարիցն ։ Առսաւորիչն, մովսիսանման՝ առանձինն, հրեշտակաց առջեւ և Աստուծոյ։

Աշակերտք ։ Առիստակիսի տարին անոր միշտ մահացեալ մարմինը և թաղեցին 'ի Ծմին աւանի՝ գաւառին Առսաւորչայ, որու սեփական ստացուած տուած էր այն տեղը թագաւորն Տրդատ։ որ 'ի հարկէ լսելով այս մէծ գոյժը՝ եկաւ սպանելցն եղբօր՝ Առթանիսի հետ՝ յետին պաշտօնը կատարելու, տրտմութեամբ և սրտմութեամբ։ յորմէ զարհուրած արջակերպն Արքեղայոս մէկէն փախեր և Կիւլիկիոյ մէջ Տօրոսի դժուարակոխ

լեռներու մէջ ընկեր էր : Իւանդու-  
թիւնն յիշէ թէ և ինքն սուրբ հայրն  
Կրիպոր ազգմամբ հոգւոյն իմաննալով  
եկաւ լալու իր խոստովանութեան պա-  
կասորդը լեցնող վկայամահ որդին, որ  
և հօրը քարոզութեան պակասորդը  
լեցընէր . և թերեւս հոգեոր նախան-  
ձով մը դարձաւ իր ճգնարանը, անկէ  
ետեւ լուսաւոր տեսութեանցը մէջ ա-  
զօտախառն երեսոյթ մ'այլ ունենալով,  
զՊիխտակէս արիւնլուայ : Իշխար-  
հաշրջիկ վարդապետ մը մեզմէ երեք  
դար առաջ ասէ, թէ սրբոյն Պրիխտա-  
կիսի կարապետանման գլուխն՝ ի՞ Քոր-  
ֆու կղզին տեսեր և պատուեր է .  
բայց մեզ անձանօթ ըլլալով Երբ և  
ինչպէս և հիմա ուր ըլլալն, փափագիմք  
դիւտին . և միսիթարիմք աստեղազարդ  
երկնից բեւերին նայած ատեննիս՝ զի-  
տել և նկատել Այլին երկրորդ և  
բարձրակամար աստեղ հետ ԱՌԻՍՏԱ-  
ԿԻՍ . որ եթէ ըստ մենասէր ախորժա-  
նայն՝ գործովք և հռչակաւ այլ ան-  
ձանօթագոյն մնաց քան զընկերակիցն,  
սակայն արդեամբք հաւասար և առա-  
ւելեալ . վասն զի գրեթէ քան զամե-  
նայն յաջորդուն (բաց ՚ի Աահակայ) եր-  
կարագոյն միջոց (իբրև քառորդ մի դա-  
րու) եպիսկոպոսական և հայրապետա-  
կան հոգաբարձութիւն ըրաւ, և լու-  
սաւորչայ քահանայապետութեան կէս  
միջոցը և կէս հոգը մէկ տեղ կրեց, ա-  
նոր սրբազն լուսոյն հետ մօտագոյն  
խառնելով իր կուսափայլ հոգւոյն Ճեր-  
մակ Ճառագայթները, զոր և յետոյ ՚ի  
ծիրանեգոյն ծարրելով՝ իր ջերմիկ ա-  
րեամբն՝ սլացաւ յառաջ քան զհայրն  
և զայլս ամենեսին, Հայ հայրապետաց  
գուպարից նախագահ ըլլալու ըստ  
դպրութեան յաւիտենից :

Հ. Ղ. Մ. Ա.



Կովկասոյ գերիները :

Շատ ատենէ ՚ի վեր կովկասեան  
լեռները Ոյուսաց կայսրութեան մէջ  
փակուած են առանց իրենն ըլլալու:  
Իսոնց վայրենի բնակիչները, իրենց լէ-  
զուովն և սեփհական շահերովն իրար-  
մէ զանազանեալք, այլ և այլ փոքրիկ  
ժողովուրդներ կը կազմեն, որոնց թե-  
պէտ քաղաքական յարաբերութիւն-  
ները քիչ է մէջերնին, բայց ամէնն ալ  
մի և նոյն անկախութեան և աւարա-  
ռութեան ոգեով վառուած են :

Իսոնցմէ ամենէն բազմաթիւը և ա-  
հարկուն Ըեւեններն են, որոնք մէծ  
և փոքր Քապարտայի մէջ կը բնակին.  
այս գաւառաւներուն բարձրագիր հովտ-  
ները մինչև Լովկասու ծայրը կը տա-  
րածուին . մարդիկը գեղեցկադէմ են,  
արիասիրտ, խելացի՝ բայց աւազակա-  
բարոյ և անգութ, և գրեթէ շարունակ  
պատերազմի վիճակի մէջ Պահակա-  
պան զօրաց հետ :

Իհա այս թափառական ժողովրդոց  
և այն անբաւ լերանց շղթաներուն  
մէջէն Ոյուսաստան իր ասիական կա-  
լուածոց հետ հաղորդակցութեան ձամ-  
բայ մը հաստատեց : Ո՛էկմէզէ քիչ  
քիչ հեռաւորութեամբ շինուած բեր-  
դեր կ'ապահովնեն այս Ճամբան մինչև  
Ոյուսատան երթալու, բայց բնաւ Ճանա-  
պարհորդ մը չհամարձակիր միայնակ  
այս երկայն անցքն ընելու . շաբաթը  
երկու անգամ հետեւակ զօրաց գունդ  
մը, թնդանութներով և բաւական իյա-  
զախներով, կ'ուղեկցի Ճամբորդներուն  
և տերութեան թղթատարներուն :  
Ոյու բերդերէն մէկը, լերանց անցքին  
վրայ շինուած աւան մը դարձած է,  
բաւական բնակիչով, և իր զրիցը պատ-  
ճառաւ Ոյութիւնակաս ըստուած է . վե-  
րոյիշեալ տաժանելի ծառայութիւնը  
ընող գնդերուն հրամանատարը հաս կը  
բնակի :

Քաքամպո անունով, բնիկ Յու-  
նաստանցի գերդաստանէ, ազնուական  
ուուս հրամանատար մը, Ոյուկտայ գըն-